[ԱՆՎԵՐՆԱԳԻՐ. ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՄԱՆՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ]

Ինչպես Մատենադարանը, կա և քարեդարան, հեռուստահաղորդումների տնտեսությունն էլ ունի հիշարժան, երբեմն կրկնելու համար իր նշանակությունը երկար պահելու նյութերի դարանը: Միայն կարելի է ափսոսել, որ այդ գործում ունեցել ենք կորուստներ:

Նկատելի է, որ վերջերս իրենց այդ դարանները նոր նյութերով հարստացնելու բացթողումները լրացնելու ջանքեր են գործադրվում և առանց տատանվելու արդեն մի քանի նման նյութեր կրկնությամբ հանձնվել են հեռուստադիտողներին. դրանց թվում են հին Երևանին վերաբերող զրույցները, հուշերը, թանգարանային ցուցադրումների նկարագրությունները և այլ հետաքրքիր հաղորդումներ:

Այստեղ իմ կողմից փորձ է արվելու կոնկրետանալ մի հաղորդման շուրջ, որն ինքնին արժեքավոր է, սակայն պարունակում է անճշտություններ և ահա այդ ձևով արդեն կրկնվածը նորից նույն ձևով չկրկնելու նկատառումով:

Խոսքը վերաբերում է Армения հաղորդալիքով պարոն Արտեմ Սարգսյանի ներկայացմամբ ճարտարապետության պատմաբան, ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանի զգալի տևողության զրույցը՝ նվիրված ճարտարապետության ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի թանգարանում ցուցադրված նախագծերի, կառույցների պատմությանը, արժեքավորմանը, իրականացմանը կյանքում և, վերջապես, իր դերին կամ վիճակին այդ ժամանակներում: Զրույցին մասնակցում էր նաև մեծ ճարտարապետի թոռը՝ Ալեքսանդր Թամանյան կրտսերը:

Ինչպես տեսնում ենք, նյութը, թեման, իրոք հետաքրքիր է և այդտեղ ասվածը նոր սերնդին փոխանցելը շնորհակալ գործ, եթե միայն այդպիսիք լինեին հավաստի և անթերի: Կարևորի մասին խոսելիս պետք է լինել պահանջկոտ, ասվածը՝ ճշգրիտ:

Նախ ինքը՝ Արտյոմ Սարգսյանը, նախքան ելույթ ունեցողին խոսք տալը, ինչպես բնական է, դրականորեն գնահատեց, բայց հենց այստեղ էլ չափը անցավ, ոչ ավել, ոչ

պակաս Հարությունյանին անվանեց «հայ ճարտարապետների պատրիարք». այդպիսին մենք իրավամբ անվանում ենք մեծ Թամանյանին: Մեր ձեռքի տակ է Էդուարդ Աղայանի արդի հայերենի բացատրական բառարանը, որի 1198 էջում կարդում ենք բառահատվածի ամենավերջին, այն էլ փոխաբերական մտքով ասվածը. «Որևէ բնագավառի ամենահեղինակավոր, ամենանշանավոր անձ, նահապետ (եկեղեցականների մոտ այդպես են անվանում Ամենայն հայոց կաթողիկոսին՝ ծայրագույն պատրիարք)»: Անձի տարիքի խնդիրը այստեղ էլ նկատի չի ունեցվում. ունենալու դեպքում էլ ճարտարապետներիս մեջ այժմ ամենատարիքավորն է Աննա Տեր-Ավետիքյանը, որը որպես ճարտարապետ գնահատելի գործեր ունի և ստեղծագործել է, երբ դեռ Ալեքսանդր Թամանյանը կար: Հարգելի պրն. Սարգսյանը, թերևս նկատի ունի պրն Վ. Հարությունյանի երկարատև աշխատանքը, և այն, որ 93 տարեկանում դեռ գրքեր է գրում, 10 տարում հրատարակելով 13-ը: Ավելի լա՞վ չէր լինի հիշվեր այդ գրքերից ամենալավի, նրա գիտական արժեքի վերաբերյալ: Թերևս նկատի է ունեցվում նրա դերը, որպես մեր ճարտարապետության պատմաբանի և տեսաբանի, մի ասպարեզ, որտեղ պրն. Հարությունյանը անթերի չի եղել և ունի ճակատագրական բացթողումներ: Այս կապակցությամբ անհետաքրքիր չէր լինի ծանոթանալ «Գարուն» ամսագրի 1997 թ. թիվ 3, էջ 85-87 տպագրված հոդվածին «Կեղծիքը չի կպչում հուշարձաններին» գլխագրով:[1]

Անհրաժեշտ ենք համարում մի երկու խոսք էլ ասել, թե ինչպես է իրեն ներկայացնում պրն. Վ. Հարությունյանը: Նա ասում է, որ ինքը երջանիկ է, որ Ալեքսանդր Թամանյանի ժամանակակիցն է եղել: Թամանյանը կյանքից հեռացավ 1936 թ., երբ Հարությունյանն ավարտեց իր ուսանողության շրջանը: Նրանք միմյանց հետ գործ չեն ունեցել. վերջինս նախորդին չի աշակերտել, մոտը չի աշխատել: Այդ ձևով

[1]Տես՝ https://tiranmarutyan.am/wp-content/uploads/2023/03/%D4%BF%D5%A5%D5%B2%D5%AE%D5%AB%D6%84%D5%A8-%D5%B9%D5%AB-%D5%AF%D5%BA%D5%B9%D5%B8%D6%82%D5%B4-%D5%B0%D5%B8%D6%82%D5%B7%D5%A1%D6%80%D5%B1%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%D5%B6.-%E2%80%93-%D4%B3%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%B6-1997-%D5%A9%D5%AB%D5%BE-3-%D5%A7%D5%BB-85-87.pdf (Ծ.Կ.):

կարող էին ասել Նիկողայոս Բունիաթյանը, որ քաղաքի գլխավոր ճարտարապետն էր, Գևորգ Քոչարն ու Միքայել Մազմանյանը, Հովհաննես Մարգարյանը, Մարկ Գրիգորյանը, Սամվել Սաֆարյանը՝ այդ սերունդը միայն և ոչ հաջորդները:

Այնուհետև պրն. Հարությունյանը հանդես է գալիս որպես ճարտարապետության Թամանյանական դպրոցի սան և նրա գործի շարունակող, այնպես, ինչպես կարող էին ասել ճարտարապետական նախագծմամբ և կառուցմամբ զբաղվող, մեծ վարպետի ոգով ստեղծագործողները, մինչ իրականում Հարությունյանը նախագծմամբ չի զբաղվել, իրականացված ստեղծագործություններ չունի, ուրիշների գործերի քննություններում չի ցուցաբերել Թամանյանական դպրոցի ճշմարիտ դեմքը բացահայտող գիտնականի հատկություններ:

Արդ այն մասին, թե ինչ անճշտություններ ասվեցին ելույթի ընթացքում Երևանի Թամանյանական հատակագծի, ապա Օպերայի և բալետի միասնական շինության վերաբերյալ:

Այն հարցին, թե ինչ անճշտություններ ասվեցին ելույթի ընթացքում Երևանի թամանյանական հատակագծի, ապա և Օպերայի և բալետի միասնական շինության վերաբերյալ:

Ինչպես և հեռուստահողորդման մեջ ասվեց, Երևանի կենտրոնական տարածքը «հիմնականում» կառուցապատվել է Թամանյանական հատակագծով, սակայն այսպես ասելն ու անցնելը քիչ է. «հիմնականում» ասված խոսքը շատ տարողունակ է:

Բանն այն է, որ այդ հատակագծում զգալի չափերի փոփոխություններ ու շեղումներ կան, և գրեթե բոլոր դեպքերում ի վնաս հատակագծի, նրա դասական մշակվածության, որ բերեց մայրաքաղաքի շքեղությունների կորստին. թվարկենք կարևորները:

1. Մեծ չափով կրճատվեցին, Թամանյանի խոսքերով ասած՝ քաղաքի թոքերը՝ նրա կանաչ տարածությունները, այսօր էլ դա շարունակվում է՝ այդ արատավոր գործելակերպը: Մաշտոցի և Բաղրամյան պողոտաների խաչմերուկով կոտորակվեց Արամ Խաչատրյանի անվան Մեծ համերգասրահի հյուսիսակողմում նախատեսված

պուրակ-այգին մոտ 5-6 հեկտար մակերեսով: Այդ իրոք մեծ կորուստ էր քաղաքի կենտրոնական մասի համար: Այդպիսի կորստի հետ չհամաձայնելով, տողերիս գրողը մեծ ճարտարապետի ծննդյան 100-ամյակին նվիրված «Նա տեսել է երևի արևային մի քաղաք» հոդվածում առաջարկել էր հնարավոր դարձնել պուրակի վերականգնումը վերոհիշյալ պողոտաների խաչմերուկը ստորերկյա դարձնելու գնով: Ժամանակ անց քաղաքաշինարար-ճարտարապետ Հրայր Իսաբեկյանը կրկնելով, առաջարկում էր պուրակի վերականգնման նույն տարբերակը:[2]

Ոչ պակաս արժեքավոր էր «Կոմունարների» անունը կրող այգին, որը ստորգետնյա անցումով պիտի միացած լիներ Մանկական (Կիրովի անվանված) այգու հետ:[3] Մինչ ճարտ. Գ. Մուշեղյանը փոխանակ ձգտելու այդ լայնատարած այգու Թամանյանական նախագծով իրականացմանը, փորձեց այդտեղ ստեղծել երևանյան «Վենեցիա», որով այդ այգին դարձել է պակաս հաճախելի:

Պուրակ-այգիներից ամենակարևորը, որ շրջանային պուրակն էր իր 100 մետրանոց կանաչ լայնքով, որ գրկում էր մայրաքաղաքի երեք-քառորդը, կրճատվեց մոտ մեկ երրորդի չափով, այն էլ շատ տեղերում մերկացվեց Երիտասարդական մետրոյի, [Կոմիտասի անվան կամերային երաժշտության տան] համերգասրահի, Վարդան Մամիկոնյանի մոնումենտի, ճարտարապետ Ստեփան Քյուրքչյանի Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու և այլ տաղավարների կառուցումներով: Մեր օրերի քաղաքաշինարարների կարծիքով «Թամանյանը հեռատես է եղել և ազատ տարածություններով ապահովել է այդ կառույցների տեղակայումը»:

---

[2] Այդ պուրակ-այգուց հյուսիս, Թամանյանի մտահղացմամբ, շոգ Երևանի համար կարևոր էր ջրավազանների կասկադը լանջն ի վեր, որի ստորին մասում արդեն ջրի լայն շիթով գործում էր ջրթափ ավազանը իր հովասուն աղմուկով: Բայց ահա այդ ավազանը քանդվեց և սկսվեց քարակերտ կասկադի կառուցումը, որը, թերևս, իր տեղը ունենար հյուսիսային, ոչ շոգ կլիմայով քաղաքներից մեկնումեկում: Այս ևս, մեր կարծիքով, յուրովի կորուստ էր տեղանքի միկրոկլիմայի ստեղծման առումով:

[3] Մանկական այգու հատակագիծը Թամանյանը մշակել է 1934 թ.: Այն մաքրագծել է ճարտարապետ Արշավիր Մինասյանը նույն արվեստանոցում իմ աշխատած ժամանակամիջոցում: Ճարտարապետ Յու. Յարալովը իր «Таманян» գրքի (1950 թ.) 91-րդ էջում տեղադրած վերին գծագիր-լուսանկարը թվագրել է 1924 թվականով, որ սխալ է: Նույն էջի ստորին գծագիր-լուսանկարը դրա հավաստի ապացույցն է:

Գլխավոր հատակագծից այսպիսի շեղումները չգոցված վերքեր են մեր գոյատևող մայրաքաղաքի օրգանիզմի վրա:

Իր հեռուստաելույթում ճարտարապետ Վ. Հարությունյանը սխալ է մեկնաբանում նաև «գլխավոր պողոտայի» կենտրոնում երբեմնի «Կուլտուրայի տուն» անունը կրող մոտ 200 մետր պարագծով շինության վերաբերյալ կարծիքները:

Թամանյանի մշակած քաղաքի կենտրոնական հրապարակը սկզբնապես սահմանափակվում էր օվալաձևով: Կառավարության շենքի «Հողժողկոմատի թևը» կանգնած էր Նալբանդյան ոչ լայն փողոցի վրա: Այժմյան շատրվանի տեղում եղած շենքերը պահպանում էին իրենց գոյությունը, երբ այս վերջիններս վերացվեցին, ազատված տեղանքը միացվեց հրապարակին, անհապաղ նախագծով շինությունը բարձրացրեց ևս մեկ հարկով, որը և իրականացվեց իրենից հետո:

Այս իրադրության մեջ «Կուլտուրայի տան» երկհարկ հարավային թևը դուրս եկավ հրապարակի վրա: Նա իր գոյությամբ խանգարում էր «գլխավոր պողոտայի» և գլխավոր հրապարակի փոխներթափանցմանը: Այդ շինությունը կոտորակում էր նաև գլխավոր պողոտայի ոչ մեծ ձգվածությունը, և վերջապես խանգարում էր «հյուսիսային պողոտայի» դուրս գալուն գլխ. հրապարակ: Թամանյանը մշակել էր այդ հանգույցի մի տարբերակ, որում հիշյալ շենքը չկա: Այս պատկերը չպիտի մենաբանել այնպես, որ իբր Թամանյանը առաջարկում է այն քանդել: Այն ժամանակ Երևանը չուներ այդ արժեքի շենքեր, այն էլ Հայֆիլհարմոնիայի հիանալի համերգասրահով, հետևաբար Թամանյանը նման առաջարկ չէր անի:

Հատակագծում շինության բացակայությունը պիտի մեկնաբանվի, որ ժամանակի ընթացքում, երբ այդ շինությունը բարոյապես և ֆիզիկապես իրեն սպառի, նրա ազատված տեղում ոչ թե նոր շինություն պիտի կառուցվի, այլ պիտի միացվի կանաչ գոտուն՝ «մեծ պողոտային»: Չէ որ քաղաքների կառուցապատումը շատ տարիներում է ամբողջացվում և այդ էլ կապահովեր հիշյալ շինության կանգուն ծերությունը և ի վերջո վերանալը:

Գլխ. հրապարակի շուտափույթ կառուցապատումը օր առաջ տեսնելու ձգտումով լցված, քաղաքի գլխավոր ճարտարապետ Մ. Գրիգորյանը և տեղակալ Է. Սարապյանը «Կուլտուրայի տան» վերակառուցմամբ մի քանի հարյուրամյակով հետաձգեցին հատակագծի այդ հանգույցի իրականացումը Թամանյանական մտահղացումով: Դեռ ավելին, կառավարական տան հրապարակին ուղղված գլխավոր ճակատը վերևում հիանալիորեն ավարտող աշտարակային մասը (պակաս հաջողությամբ) տեղափոխեցին հիշյալ վերակառուցված շինությանը վերևից ավարտված տեսնելու համար:

Ճարտարապետ Վ. Հարությունյանը իր հեռուստաելույթում անճշտություններ է հաղորդում նաև Օպերայի և բալետի և մեծ համերգասրահի միացյալ շինության թանգարանում ներկայացված Թամանյանի գծագրերը ներկայացնելիս: Այդ ելույթից այն տպավորությունն է ստացվում, որ իբր համերգասրահի կառուցված տարբերակը մշակվել է Թամանյանից հետո – ուրիշների կողմից:

Թամանյանի գծագրերում ներկայացվում են նաև բաց համերգասրահի գծագրական տարբերակներ, որոնք, սակայն, երբեք չեն եղել հիմնական գծագրերի շարքում: Ըստ երևույթին ճարտարապետին շփոթեցրել է «ամառային» հանդիսասրահ անվանումը, որ մերթ գործածվել է մեծ համերգասրահի վերաբերյալ: Գծագրերում «ամառայինը» եղել է երկու ձևով, միմյանցից խիստ տարբեր, մեկը հունական ամֆիթատրոնի ձևով առանց վերնածածկի՝ բաց: Մյուսը նույն Օպերայի և բալետի սրահի ձևով՝ վերևից ծածկված, առանց սակայն դռների և պատուհանների, պատերը փոխարինված են հարթ սյուներով: Հետագայում Թամանյանի որդի ճարտարապետ Գևորգ Թամանյանը ծանրաբեռնված լինելով օգնության է կանչում ճարտարապետ Հայկ Դավթյանին (որ իր դասընկերներից էր), և նրանք միասին որմնասյուների միջև լայն բացվածքները համեմատաբար փոքրացնում են, ավելացնում դռներ և պատուհաններ և ուրիշ ոչինչ:

Այնպես որ, մեծ համերգասրահը կառուցելիս, սկզբից էլ ամֆիթատրոնաձև տարբերակների առկայություն չի եղել:

1937 թ. Փարիզի համաշխարհային ցուցահանդեսին ուղարկված գծագրերում, որտեղ Թամանյանն արժանացել է «գրան պրի» մեծ մրցանակի, եղել են այն գծագրերը, որոնք կյանքում իրականացվել են:

Մեծ համերգասրահի կառուցողներից ինժ. Վարդան Զախարյանը, որ իմ դասընկերներից էր (զուգահեռ կոնստրուկտորների խմբից), իր նախաձեռնությամբ (Գևորգ Թամանյանի համաձայնությամբ) մի փոփոխություն է մտցնում՝ շինության վերնամասի զույգ սյուների շարքն իրականացնում է ամբողջությամբ երկաթբետոնով: Այդ նույն դրվագը Օպերայի վերնամասի զույգ սյուները, ի տարբերություն վերոհիշյալի իրականացված է երկշերտ՝ կենտրոնում կրող երկաթբետոն է, դրսից տախտակամած է, սվաղված: Այս դեպքում հնարավոր է հետագայում, երբ հնարավոր լինի, սվաղված տախտակամածը կփոխարինվի սրբատաշ գրանիտի քարերով: Այս անել մեծ համերգասրահի կողմում հնարավոր չի լինի: Այս էլ կորուստներից է, չխրախուսվող փոփոխության արդյունք: